Հավելված
Հաշվեքննիչ պալատի
2020թ. դեկտեմբերի 25-ի թիվ 232-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՎԵՑ ԱՄԻՍՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2020

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.Ներածական մաս ----------էջ 3
2.Ամփոփագիր ----------էջ 5
3.Տվյալներ հաշվեքննվող օբյեկտի ֆինանսական հաշվետվության վերաբերյալ--էջ 6
4.Հաշվեքննությամբ արձանագրված այլ փաստեր ----------էջ 19
5.Եզրակացություններ----------էջ 20
6. Առաջարկություններ ---------- ---------- ----------էջ 21

1. ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ

Հաշվեքննության հիմքը	Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի 2020 թվականի օգոստոսի 7-ի թիվ 148-Ա որոշում:
Հաշվեքննության օբյեկտը	Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ:
Հաշվեքննության առարկան	Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի 2020 թվականի վեց ամիսների պետական բյուջեի մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն:
Հաշվեքննության չափանիշները	1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2019թ. դեկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» թիվ 1919-Ն որոշում: 2. «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք: 3. ՀՀ կառավարության 01.04.2020թ. N 423-Ն որոշում: 4.ՀՀ կառավարության 01.04.2020թ. N 424-Ն որոշում: 5.ՀՀ Կառավարության 02.04.2020թ. N 428-Ն որոշում: 6.ՀՀ կառավարության 23.06.2020թ. N 1032-Ն որոշում: 7. ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 12-ի «Գնման գործընթացները սահմանելու մասին» թիվ 296-Ա որոշում: 8. ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշում 9.ՀՀ կառավարության 06.04.2020թ. N 488-Ն որոշում 10. ՀՀ կառավարության 15.05.2018 թվականի 706-Ն որոշում 11.ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 12-ի N274-Ն որոշում 12. ՀՀ կառավարության 2020 թվականի մայիսի 7-ի N715-Ն որոշում 13. ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի

«Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգը հաստատելու մասին»թիվ 1937-Ն որոշում:

Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը

2020 թվականի հունվարի 1-ից մինչև 2020թ. Հունիսի 30-ը՝ ներառյալ:

Հաշվեքննության կատարման ժամկետը

2020 թվականի օգոստոսի 17-ից մինչև հոկտեմբերի 31-ը: ՀՀ հաշվեքննիչ պալատի 2020 թվականի սեպտեմբերի 30-ի թիվ 168-Ա որոշմամբ հաշվեքննությունը կասեցվել և վերսկսվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի 2020 թվականի նոյեմբերի 20-ի թիվ 171-Ա որոշմամբ:

Հաշվեքննության մեթոդաբանությունը

Հաշվեքննությունն իրականացվել է «Հաշվեքննիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, ՀՀ պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների և տարեկան կատարման հաշվեքննության ուղեցույցի, ՀՀ հաշվեքննիչ պալատի ֆինանսական և համապատասխանության հաշվեքննության մեթոդաբանությունների համաձայն:

Իրականացվել է ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն, որի ընթացքում կիրառվել են հարցում, վերլուծական ընթացակարգ և վերահաշվարկ ընթացակարգերը:

Հաշվեքննությունն իրականացրած կառուցվածքային ստորաբաժանում

Հաշվեքննությունն իրականացվել է Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի վեցերորդ վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է ՀՀ հաշվեքննիչ պալատի նախագահ Լևոն Յոլյանը:

2. ԱՄՓՈՓԱԳԻՐ

2020 թվականի առաջին կիսամյակի պլանով ՀՀ վարչապետի աշխատակազմը որպես կատարող նախատեսել է իրականացնել 43 միջոցառում, ճշտված պլանով դրանց թիվն ավելացել է 10-ով՝ կազմելով 53: Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է 39 միջոցառում, 14-ը չի իրականացվել:

Հաշվետու ժամանակահատվածի (6 ամիս) պլանը հաստատվել է 11,186,733.30 հազ. դրամի չափով, ճշտված պլանը կազմել է 14,684,157.18 հազ. դրամ, ֆինանսավորումը՝ 9,267,600.77 հազ. դրամ, փաստը (դրամարկղային ծախսը)՝ 9,432,394.18 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 9,631,068.39 հազ. դրամ: Հաշվետու ժամանակահատվածում ճշտված պլանի նկատմամբ բյուջեն կատարվել է 64.24%-ով:

Հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլանով նախատեսված, սակայն չիրականացված 14 միջոցառումների մասով հատկացված բյուջեն կազմել է 352,644.80 հազ. դրամ:

ՀՀ վարչապետի աշխատակազմում հաշվեքննությունն իրականացվել է ութ միջոցառման շրջանակում, որոնց հաշվետու ժամանակահատվածի փաստը (դրամարկղային ծախս) կազմել է 5,783,966.13 հազ. դրամ:

Հաշվեքննությամբ ընդգրկված միջոցառումների մասով անհամապատասխանություններ և խեղաթյուրումներ չեն հայտնաբերվել:

Միաժամանակ՝ հաշվեքննությամբ ընդգրկված որոշ միջոցառումների գծով արձանագրվել են առաջին կիսամյակի ցածր կատարողականներ: Դրանք են, մասնավորապես՝ «1136 ՀՀ վարչապետի լիազորությունների իրականացման ապահովում» ծրագրի «11011 Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող առևտրի և ենթակառուցվածքների զարգացման ծրագիր» միջոցառման «4521 Սուբսիդիաներ ոչ պետական ոչ ֆինանսական կազմակերպություններին» հոդվածին, որի փաստը (դրամարկղային ծախս) կազմել է 29,04% և «1018 Պետական հատվածի արդիականացում» ծրագրի «32001 Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Պետական հատվածի արդիականացման երրորդ ծրագրի շրջանակներում էլեկտրոնային կառավարման համակարգերի և սարքավորումների ձեռքբերում» միջոցառման «5129 Այլ մեքենաներ և սարքավորումներ» հոդվածը, որի հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլանի նկատմամբ փաստը (դրամարկղային ծախս) կազմել է 60,77%:

3. ՏՎՅԱԼՆԵՐ ՀԱՇՎԵՔՆՆՎՈՂ ՕԲՅԵԿՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ վարչապետի աշխատակազմը 2020 թվականի առաջին կիսամյակի պլանով, որպես կատարող, նախատեսել է իրականացնել 43 միջոցառում, ճշտված պլանով դրանց թիվը կազմել է 53, որից իրականացվել է 39-ը:

Հաշվետու ժամանակահատվածի (6 ամիս) պլանը կազմել է 11,186,733.30 հազ. դրամ, ճշտված պլանը՝ 14,684,157.18 հազ. դրամ, ֆինանսավորումը՝ 9,267,600.77 հազ. դրամ, փաստը (դրամարկղային ծախսը)՝ 9,432,394.18 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 9,631,068.39 հազ. դրամ: Հաշվետու ժամանակահատվածում ճշտված պլանի նկատմամբ բյուջեն կատարվել է 64.24%-ով:

Հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլանով նախատեսված, սակայն չիրականացված 14 միջոցառումների համար հատկացված բյուջեն կազմել է 352,644.80 հազ. դրամ:

ՀՀ վարչապետի աշխատակազմում 2020 թվականի պետական բյուջեի վեց ամիսների կատարման նկատմամբ հաշվեքննությամբ ընդգրկվել է ստորև բերված աղյուսակում ներկայացված թվով ութ միջոցառում՝ 5,783,966.13 հազ. դրամ ընդհանուր գումարով:

Ծրագիր		Միջոցառում		Հոդված		Փաստ /հազ. դրամ/
1003	Հանրային առողջության պահպանում	11007	Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսային վարակի (COVID-19) ախտորոշման միջոցառումների իրականացում	4266	Առողջապահական և լաբորատոր նյութեր	1,129,409.30
1003	Հանրային առողջության պահպանում	31001	Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսային վարակի (COVID-19) կանխարգելման, վերահսկման, բուժման նպատակով բժշկական սարքերի ձեռքբերում	5122	Վարչական սարքավորումներ	655,782.26
1018	Պետական հատվածի արդիականացման ծրագիր	32001	Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Պետական հատվածի արդիականացման երրորդ ծրագրի շրջանակներում էլեկտրոնային	5129	Այլ մեքենաներ և սարքավորումներ	1,417,836.62

			կառավարման համակարգերի և սարքավորումների ձեռքբերում			
1091	Հանրային իրազեկում	11001	Հանրային իրազեկում և հասարակական-քաղաքագիտական հետազոտություններ	4637	Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին	595,722.60
1136	ՀՀ Վարչապետի լիազորությունների իրականացման ապահովում	11001	Ծառայությունների, ծրագրերի համակարգում	4111	Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	875,326.54
1136	ՀՀ Վարչապետի լիազորությունների իրականացման ապահովում	11011	Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող առևտրի և ենթակառուցվածքների զարգացման ծրագիր	4521	Սուբսիդիաներ ոչ պետական ոչ ֆինանսական կազմակերպություններին	347,618.27
1213	Տեսչական վերահսկողության ծրագիր	11007	Սննդամթերքի անվտանգության բնագավառում վերահսկողության իրականացման ծառայություններ	4111	Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	332,614.60
1223	Միջազգային դատարաններում, միջազգային արբիտրաժներում և այլ միջազգային ատյաններում ՀՀ շահերի ներկայացում և պաշտպանություն , դրանց կողմից ընդունված վճիռների և որոշումների կատարման ապահովում	11001	Հայաստանի Հանրապետության շահերի ներկայացմանն ու պաշտպանությանն ուղղված փաստաբանական, իրավաբանական ծառայություններ	4861	Այլ ծախսեր	429,655.94
ԸՆԴԱՄԵՆԸ						5,783,966.13

ԾՐԱԳԻՐ՝ «1003 Հանրային առողջության պահպանում»:
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ՝ «11007 Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսային վարակի (COVID-19) ախտորոշման միջոցառումների իրականացում»:
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ՝ «31001 Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսային վարակի (COVID-19) կանխարգելման, վերահսկման, բուժման նպատակով բժշկական սարքերի ձեռքբերում»:

«1003 Հանրային առողջության պահպանում» ծրագրի պատասխանատուն ՀՀ առողջապահության նախարարությունն է, կատարողը՝ ՀՀ վարչապետի աշխատակազմը:

2020 թվականի պետական բյուջեով 11007 «Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսային վարակի (COVID-19) ախտորոշման միջոցառումների իրականացում» միջոցառման «4266 Առողջապահական և լաբորատոր նյութեր» հոդվածով առաջին կիսամյակի ճշտված պլանը կազմել է 1,229,506.20 հազ. դրամ, ֆինանսավորումը՝ 1,129,506.20 հազ. դրամ, փաստը (դրամարկղային ծախսը)՝ 1,129,409.30 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 1,061,444.30 հազ. դրամ:

«31001 Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսային վարակի (COVID-19) կանխարգելման, վերահսկման, բուժման նպատակով բժշկական սարքերի ձեռքբերում» միջոցառման «5122 Վարչական սարքավորումներ» հոդվածով առաջին կիսամյակի ճշտված պլանով նախատեսվել է 755,782.30 հազ. դրամ, ֆինանսավորումը, փաստը (դրամարկղային ծախսը) և փաստացի ծախսը կազմել են՝ 655,782.26 հազական դրամ:

2020 թվականի 2-րդ եռամսյակի «1003 Հանրային առողջության պահպանում» ծրագրի ճշտված պլանի և փաստի վերաբերյալ[1]

հազ.դրամ

Ծրագիր, միջոցառում	**2-րդ եռամսյակ**	
	Հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլան	Փաստ

[1] Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «1003 Հանրային առողջության պահպանում» ծրագրի 11007 և 31001 միջոցառումները կրում են շարունակական բնույթ և 2020թ. առաջին եռամսյակի կատարման նկատմամբ հաշվեքննության արդյունքները հաստատվել են ՀՀ հաշվեքննիչ պալատի 2020թ. հուլիսի 30-ի թիվ 115-Ա որոշմամբ, ուստի սույն ընթացիկ եզրակացությամբ ներկայացվել են 2020թ. երկրորդ եռամսյակի ցուցանիշները:

1003	Հանրային առողջության պահպանում		957,997.04	795,054.10
	1003-11007	Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսային վարակի (COVID-19) ախտորոշման միջոցառումների իրականացում	857,997.00	757,900.10
	1003-31001	Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսային վարակի (COVID-19) կանխարգելման, վերահսկման, բուժման նպատակով բժշկական սարքերի ձեռքբերում	137,154.00	37,154.00

11007 և 31001 միջոցառումների 2-րդ եռամսյակի բյուջեում գումարներ նախատեսվել են ՀՀ կառավարության 01.04.2020թ. 423-Ն, 01.04.2020թ. N 424-Ն, 02.04.2020թ. N 428-Ն, 06.04.2020թ. N 488-Ն որոշումներով, իսկ ՀՀ կառավարության 23.06.2020թ. N 1032-Ն որոշմամբ կատարվել են բյուջեի նվազեցումներ:

«1003 Հանրային առողջության պահպանում» ծրագրի բյուջեի փոփոխությունները 2020 թվականի երկրորդ եռամսյակում

հազ. դրամ

Ծրագիր, միջոցառում		ՀՀ կառ. 01.04.20թ. N423-Ն որոշում	ՀՀ կառ. 01.04.20թ. N424-Ն որոշում	ՀՀ կառ. 02.04.20թ. N428-Ն որոշում	ՀՀ կառ. 06.04.20թ. N488-Ն որոշում	ՀՀ կառ. 23.06.20թ. N1032-Ն որոշում	Ընդամենը
1003-11007	Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսայի ն վարակի (COVID-19) ախտորոշման միջոցառումների իրականացում	288,150.00	-	97,920.00	718,145.80	-246,218.80	857,997.00
1003-31001	Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսայի ն վարակի (COVID-19) կանխարգելման, վերահսկման, բուժման նպատակով բժշկական սարքերի ձեռքբերում	-	37,154.00	-	307,776.80	-207,776.80	137,154.00

Վերը նշված որոշումներով (բացառությամբ 23.06.2020թ. N 1032-Ն որոշման) սահմանվել է, որ գնումներն իրականացվում, իսկ վճարումները կատարվում են հաշիվ-ապրանքագրերի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 12-ի N 296-Ա որոշմամբ նախատեսված կարգով՝ հաշվի առնելով նաև այն, որ սույն կետով նախատեսված գործարքների նկատմամբ չեն կիրառվում նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջները: Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 12-ի N296-Ա որոշման 2-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսային վարակի (COVID-19) կանխարգելման, վերահսկման, բուժման և այլ համալիր միջոցառումների շրջանակում գործարքները կարող են կատարվել առանց գրավոր պայմանագրերի կնքման՝ վճարումները կատարելով հաշիվ-ապրանքագրի կամ հսկիչ դրամարկղային մեքենայի կտրոնի հիման վրա, ինչպես նաև բացառիկ դեպքերում՝ առանց վերջիններիս առկայության:

Միաժամանակ՝ ՀՀ կառավարության վերը նշված որոշումների համապատասխան հավելվածներով սահմանվել են ՀՀ առողջապահության նախարարությանն ամրացվող նյութերի ցանկը:

- ✓ «11007 Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսային վարակի (COVID-19) ախտորոշման միջոցառումների իրականացում» միջոցառման երկրորդ եռամսյակի դրամարկղային ծախսը կազմել է 757,900.1 հազ. դրամ:
- ✓ «31001 Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսային վարակի (COVID-19) կանխարգելման, վերահսկման, բուժման նպատակով բժշկական սարքերի ձեռքբերում» միջոցառման երկրորդ եռամսյակի դրամարկղային ծախսը կազմել է 37,154.0 հազ. դրամ:

Տվյալ ծախսերի իրականացման վերաբերյալ ՀՀ վարչապետի աշխատակազմի կողմից ներկայացվել են համապատասխան հիմքերը՝ հաշիվ-ապրանքագիրը և հանձնման-ընդունման ակտերը, որոնք հաստատում են միջոցառումների շրջանակում ապրանքների ձեռք բերումը, դրանցով վճարումների կատարումը և հետագայում՝ ՀՀ առողջապահության նախարարությանը հանձնումը:

ԾՐԱԳԻՐ՝ «1018 Պետական հատվածի արդիականացման ծրագիր»

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ՝ «32001 Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Պետական հատվածի արդիականացման երրորդ ծրագրի շրջանակներում էլեկտրոնային կառավարման համակարգերի և սարքավորումների ձեռքբերում»

Ծրագրի նպատակն է հանրային ֆինանսական հաշվետվությունների որակի և ընտրված էլեկտրոնային կառավարման կատարելագործված ծառայությունների հասանելիության բարելավումը: Ծրագիրը բաղկացած է չորս մասից՝

1. Պետական ֆինանսների կառավարման տեղեկատվական համակարգեր

2. Ծառայությունների մատուցման բարելավմանն ուղղված էլեկտրոնային կառավարման լուծումներ
3. Կարողությունների զարգացում և կարողությունների ստեղծման փոքր միջամտություններ
4. Ծրագրի կառավարում:

Ծրագիրն ընդգրկում է երկու միջոցառում՝ «11001 Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող՝ Պետական հատվածի արդիականացման երրորդ ծրագիր» և «32001 Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Պետական հատվածի արդիականացման երրորդ ծրագրի շրջանակներում էլեկտրոնային կառավարման համակարգերի և սարքավորումների ձեռքբերում»:

«1018 Պետական հատվածի արդիականացում» ծրագրի «32001 Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Պետական հատվածի արդիականացման երրորդ ծրագրի շրջանակներում էլեկտրոնային կառավարման համակարգերի և սարքավորումների ձեռքբերում» միջոցառման «5129 Այլ մեքենաներ և սարքավորումներ» հոդվածով առաջին կիսամյակի ճշտված պլանով ծախսը նախատեսվել է 2,332,929.50 հազ. դրամի չափով, ֆինանսավորումը կազմել է 118,000.0 հազ. դրամ (ՀՀ պետական բյուջեի միջոցներից), փաստը (դրամարկղային ծախսը) և փաստացի ծախսը կազմել են 1,417,836.62 հազարական դրամ: 31.12.2019թ. դրությամբ ծրագրի հատուկ հաշվի մնացորդը կազմել է 1,499,836.6 ԱՄՆ դոլար:

Հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլանի նկատմամբ դրամարկղային ծախսը կազմել է 60,77%: Համաձայն «ՀՀ 2020 թվականի առաջին կիսամյակի պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների կատարման վերաբերյալ՝ ըստ միջոցառումները կատարող հանրային իշխանության մարմինների» հաշվետվության, բյուջեն թերակատարվել է, քանի որ պատվիրատուների կողմից ծրագրի կառավարման խմբին չեն ներկայացվել համապատասխան մրցութային փաստաթղթեր, որի հետևանքով դեռևս չեն սկսվել ՀՀ վարչապետի աշխատակազմի սերվերների կենտրոնի արդիականացման նպատակով սարքավորումների ձեռքբերման, սմարթֆոնների համար թվային ստորագրությունների և նույնականացման համակարգերի մատակարարման և տեղադրման, Էլ. լիցենզավորման համակարգի ծրագրային ապահովման ձեռքբերման աշխատանքները:

ԾՐԱԳԻՐ՝ «1091 Հանրային իրազեկում»

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ՝ «11001 Հանրային իրազեկում և հասարակական-քաղաքագիտական հետազոտություններ»

2020 թվականի պետական բյուջեով ՀՀ վարչապետի աշխատակազմի «11001 Հանրային իրազեկում և հասարակական-քաղաքագիտական հետազոտություններ» միջոցառման շրջաանկում «4637 Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին» հոդվածով առաջին կիսամյակի պլանը կազմել

է 325,965.8 հազ. դրամ, ճշտված պլանը, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը՝ 595,722.6 հազարական դրամ, փաստացի ծախսը՝ 568,520.90 հազ. դրամ:

ՀՀ վարչապետի աշխատակազմի և «Հանրային կապերի և տեղեկատվական կենտրոն» ՊՈԱԿ-ի միջև 08.01.2020թ-ին կնքվել է դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին N01 պայմանագիր: Պայմանագրի 1.1. կետով ՀՀ վարչապետի աշխատակազմը պարտավորվել է ծրագրի իրականացման նպատակով ՊՈԱԿ-ին հատկացնել ՀՀ կառավարության թիվ 1919-Ն որոշմամբ նախատեսված տարեկան կտրվածքով մինչև 733,555.60 հազ. դրամ (ներառյալ ԱԱՀ)՝ 2020 թվականի պետական բյուջեով հաստատված տարեկան հատկացումների եռամսյակային բաշխվածությանը համապատասխան և ամսական համամասնություններով:

2020 թվականի առաջին կիսամյակում ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 12-ի N274-Ն և 2020 թվականի մայիսի 7-ի N715-Ն որոշումների հիման վրա 11001 միջոցառման տարեկան բյուջեն ավելացվել է 35,000.0 հազ. դրամով (1-ին կիսամյակի համար 15,466.8 հազ. դրամ) և դրա կատարումն ապահովելու համար 2020 թվականի մայիսի 19-ին կնքվել է 01/1 համաձայնագիր, որով պայմանագրի անբաժանելի մասը համարվող հավելված 1-ով ներկայացված կատարման ենթակա թվով 30 գործառույթների նկարագիրը լրացվել է ևս 3-ով, դրանք են՝ պարբերականում հրապարակված տեղեկատվական նյութեր, պարբերականի այցելություններ և հրապարակված նյութերի մեջ սփյուռքի համայնքներին վերաբերող նյութեր:

Ինչ վերաբերում է ՀՀ կառավարության 2020 թվականի մայիսի 7-ի N715-Ն որոշմանն, ապա միջոցառման առաջին կիսամյակի բյուջեն ավելացել է 254,290.0 հազ. դրամով, որը որոշման 3-րդ կետի համաձայն՝ ուղղվելու է Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի նախորդ տարիներին առաջացած ավելացված արժեքի հարկի գծով հարկային պարտավորությունների մարմանը: Այդ նպատակով ՊՈԱԿ-ի հետ 2020 թվականի մայիսի 21-ին կնքվել է պայմանագրի գինը 254,290.00 հազ. դրամով ավելացնելու վերաբերյալ 01/2 համաձայնագիրը, որի արդյունքում պայամանագրի արժեքը կազմել է 1,022,845.60 հազ. դրամ: Համաձայն ՊՈԱԿ-ի տնօրենի 2020 թվականի հունիսի 15-ի գրության՝ 2020 թվականի հունիսի 1-ին ՀՀ կառավարության որոշմամբ հատկացված գումարը ՊՈԱԿ-ն ամբողջությամբ ուղղել է ԱԱՀ-ի և դրա գծով առաջացած տույժերի և տուգանքների մարմանը:

ՊՈԱԿ-ը 15.07.2020 թվականի միջոցառումների կատարման հանձնման-ընդունման արձանագրության 1-ին կետով ներկայացրել է 08.01.-30.06.2020թ. ընկած ժամանակահատվածում կատարված աշխատանքները՝ (թվով 33 գործառույթի քանակական ցուցանիշներ), որտեղ 2020 թվականի մայիսի 19-ին կնքված 01/1 համաձայնագրով ավելացված թվով 3 գործառույթների համար քանակական ցուցանիշ նշված չէ: Համաձայն «ՀՀ 2020 թվականի առաջին կիսամյակի պետական բյուջեի

ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների կատարման վերաբերյալ՝ ըստ միջոցառումների կատարող հանրային իշխանության մարմինների» հաշվետվության՝ գործառույթները չեն կատարվել, քանի որ ՀՀ-ում հայտարարված արտակարգ դրությամբ՝ COVID-19-ով պայմանավորված Սփյուռքի բաժինը վերջնականապես չի ձևավորվել և պարբերականում նյութեր չեն հրապարակվել:

Հանձնման-ընդունման արձանագրության 2-րդ կետով նշվել է, որ կազմակերպությանը տրամադրվել է 595,722.60 հազ. դրամի չափով դրամաշնորհ, իսկ կազմակերպության հատուցվող ծախսը կազմել է 568,520.9 հազ. դրամ, որից դուրս գրված հարկային հաշիվների հանրագումարը կազմել է 313,227.7 հազ. դրամ, նախորդ տարիների ԱԱՀ-ի գծով պարտավորությունների մարման ծախսերը՝ 255,293.1 հազ. դրամ (որից 254,290.0 հազ. դրամը ՀՀ կառավարության 715-Ն որոշմամբ հատկացված գումարն է):

ԾՐԱԳԻՐ՝ «1136 ՀՀ վարչապետի լիազորությունների իրականացման ապահովում»

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ՝ «11001 Ծառայությունների, ծրագրերի համակարգում»

ՀՈԴՎԱԾ՝ «4111 Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ»

2020 թվականի պետական բյուջեով «11001 ծառայությունների, ծրագրերի համակարգում» միջոցառման «4111 աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» հոդվածով 2020 թվականի առաջին կիսամյակի պլանով և ճշտված պլանով ծախսը նախատեսվել է 1,102,298.80 հազ. դրամի չափով, ֆինանսավորումը կազմել է 1,060,896.00 հազ. դրամ, փաստը (դրամարկղային ծախսը)՝ 875,326.54 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 1,024,849.82 հազ. դրամ:

2020 թվականի երկրորդ եռամսյակում 530,120.09 հազ. դրամ դրամարկղային ծախսն իրականացվել է ստորև ներկայացված աղյուսակում նշված նպատակների համար[2].

հազ. դրամ

Վճարման նպատակ	Ապրիլ	Մայիս	Հունիս	ԸՆԴԱՄԵՆԸ
Աշխատավարձ	218,355.06	110,593.49	820.02	329,768.57
Եկամտային հարկ	40,515.47	38,767.63	34,775.91	114,059.01

[2] «11001 Ծառայությունների, ծրագրերի համակարգում» միջոցառման «4111 Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» հոդվածով 2020թ. առաջին եռամսյակի ծախսերն արտացոլված են ՀՀ հաշվեքննիչ պալատի կողմից 2020թ. հուլիսի 30-ի թիվ 115-Ա որոշմամբ հաստատված ընթացիկ եզրակացության մեջ

:

Սոցիալական վճար	2,959.95	1,869.67	2,584.20	7,413.81
Դրոշմանիշային վճար	540.00	126.00	520.00	1,186.00
Արձակուրդային վճար	2,845.86	10,837.73	15,655.35	29,338.94
Պարգևավճար	15,063.91	4,236.22	11,527.59	30,827.72
Վերջնահաշվարկ	3,602.51	288.61	4,915.77	8,806.90
Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստ	1,936.16	3,521.39	1,991.43	7,448.98
Օգնություն	0.00	0.00	436.96	436.96
Անդամավճար	249.27	235.23	213.04	697.55
ԴԱՀԿ	44.17	0.00	91.49	135.66
ԸՆԴԱՄԵՆԸ	**286,112.35**	**170,475.98**	**73,531.77**	**530,120.09**

ՀՀ վարչապետի աշխատակազմը կազմված է 700 հաստիքից: Համաձայն տրամադրված տեղեկանքի՝ ապրիլ և մայիս ամիսներին աշխատավարձ վճարվել է 544, հունիս ամսին՝ 553 աշխատակցին:

ԾՐԱԳԻՐ՝ «1136 ՀՀ վարչապետի լիազորությունների իրականացման ապահովում»

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ՝ «11011 Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող առևտրի և ենթակառուցվածքների զարգացման ծրագիր»:

2020 թվականի պետական բյուջեով ՀՀ վարչապետի աշխատակազմի «1136 ՀՀ վարչապետի լիազորությունների իրականացման ապահովում» ծրագրի «11011 Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող առևտրի և ենթակառուցվածքների զարգացման ծրագիր» միջոցառման առաջին կիսամյակի ճշտված պլանը «4521 Սուբսիդիաներ ոչ պետական ոչ ֆինանսական կազմակերպություններին» հոդվածով կազմել է 1,197,026.00 հազ. դրամ, ֆինանսավորումը՝ 90,679.00 հազ. դրամ (ՀՀ պետական բյուջեի միջոցներից), փաստը և փաստացի ծախսը՝ 347,618.27 հազարական դրամ: 31.12.2019 թվականի դրությամբ ծրագրի վարկային հատուկ հաշվի մնացորդը կազմել է 2,482,382.21 ԱՄՆ դոլար:

Հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլանի նկատմամբ «4521 Սուբսիդիաներ ոչ պետական ոչ ֆինանսական կազմակերպություններին» հոդվածի դրամարկղային ծախսը կատարվել է 29,04%-ով: Համաձայն «ՀՀ 2020 թվականի առաջին կիսամյակի պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների կատարման վերաբերյալ՝ ըստ միջոցառումների կատարող հանրային իշխանության մարմինների» հաշվետվության, բյուջեն թերակատարվել է, քանի որ վարկային ծրագրի շրջանակում տարբեր

ենթաբաղադրիչներով պահպանման ծախսերի կատարման նպատակով դրամաշնորհային համաձայնագրերը ՀՀ վարչապետի աշխատակազմի և շահառուների միջև ստորագրվել են 2020թ. մայիս ամսին և վերոնշյալ ծախսերի դիմաց վճարումներն իրականացվել են ուշացումով:

Առաջին կիսամյակում իրականացված 347,618.27 հազ. դրամ դրամարկղային ծախսի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվել է ներքոնշյալ աղյուսակում.

Կազմակերպություն	Պայմանագրի համար	Վճարում, հազ. դրամ		
		ՀԲ վարկային միջոցներից	ՀՀ համաֆին. միջոցներից	Ընդամենը
Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամ	TPQI-EIF-OP	138,920.35	52,851.20	191,771.55
Ներդրումների աջակցման կենտրոն հիմնադրամ	TPQI-ISC-OP	4,234.32	1,692.03	5,926.35
Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ ՓԲԸ	TPQI-ANIF-OP	113,785.89	36,134.48	149,920.37
ԸՆԴԱՄԵՆԸ		**256,940.56**	**90,677.71**	**347,618.27**

ՀՀ վարչապետի աշխատակազմի և «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի միջև դրամաշնորհի հատկացման վերաբերյալ պայմանագիրը կնքվել է 04.05.2020թ.: Պայմանագրին կից հավելվածով ներկայացված «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի 2020-2022թթ. համար Համաշխարհային բանկի «Առևտրի խթանման և որակի ենթակառուցվածքի» վարկային ծրագրի միջոցների հաշվին կատարվող գործառնական ծախսերի նախահաշվի համաձայն՝ պայմանագրի ընդհանուր գումարը կազմել է 219,785.2 հազ. դրամ, որից 165,252.0 հազ. դրամը վարկային, իսկ 54,533.2 հազ. դրամ՝ համաֆինանսավորման միջոցներն են:

Համաձայն «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի կողմից ներկայացված տեղեկատվության՝ հաշվետու ժամանակահատվածում ծախսերն իրականացվել են հետևյալ ուղղություններով.

No	Կազմակերպություն	Վճարում, հազ. դրամ		
		ՀԲ վարկային միջոցներից	ՀՀ համաֆին. միջոցներից	Ընդամենը
	«ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆԿՈՒԲԱՏՈՐ» ՀԻՄՆԱԴՐԱՄ, այդ թվում՝	78,497.43	36,131.02	114,628.45
1	Գործառնական ծախսեր	13,916.92	5,836.92	19,753.84
2	Ինժեներական քաղաք բաղադրիչի գործառնական ծախսեր	30,576.79	14,320.09	44,896.88
3	Նարարարական համաֆինանսավորվող դրամաշնորհներ բաղադրիչի գործառնական ծախսեր	8,367.48	3,531.02	11,898.50

4	Գերհամակարգչային կենտրոնի ստեղծման ծրագիր բաղադրիչի գործառնական ծախսեր	2,097.03	777.57	2,874.60
5	Կիբեռանվտանգության լաբորատորիայի ստեղծման ծրագիր բաղադրիչի գործառնական ծախսեր	23,539.21	11,665.42	35,204.63

Այսպիսով, «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամն իրեն հատկացված 191,771.55 հազ. դրամից ծախսել է 114,628.45 հազ. դրամը, կամ 59.77%-ի չափով:

ՀՀ վարչապետի աշխատակազմի և «Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամի միջև 15.05.2020թ. կնքվել է դրամաշնորհի հատկացման պայմանագիր: Պայմանագրին կից հավելվածով ներկայացված՝ «Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամի 2020-2021թթ. համար Համաշխարհային բանկի «Առևտրի խթանման և որակի ենթակառուցվածքի» վարկային ծրագրի միջոցների հաշվին կատարվող գործառնական ծախսերի նախահաշվի համաձայն՝ պայմանագրի ընդհանուր գումարը կազմել է 53,077.6 հազ. դրամ, որից 37,868.8 հազ. դրամը վարկային, իսկ 15,208.8 հազ. դրամ՝ համաֆինանսավորման միջոցներն են:

Համաձայն «Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամի կողմից ներկայացված հաշվետու ժամանակահատվածի ծախսերի վերաբերյալ տեղեկատվության՝ դրանք իրականացվել են հետևյալ ուղղություններով.

No	Կազմակերպություն	Վճարում, հազ. դրամ		
		ՀԲ վարկային միջոցներից	ՀՀ համաֆին. միջոցներից	Ընդամենը
	ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ, այդ թվում՝	3,477.06	1,659.71	5,136.77
1	Անձնակազմի վարձատրություն	2,735.07	1,384.65	4,119.72
2	Գործուղման ծախսեր	-	-	-
3	Ծառայություններ	741.99	275.06	1,017.05
3.1	Միջոցառումների կազմակերպում	-	-	-
3.2	Գովազդային/մարքեթինգային ծախսեր	741.99	275.06	1,017.05
4	Գրասենյակային ծախսեր	-	-	-

Այսպիսով՝ «Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամը հատկացված 5,926.35 հազ. դրամից ծախսել է 5,136.77 հազ. դրամ, կամ 86.67 %-ը:

ՀՀ վարչապետի աշխատակազմի և «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ-ի միջև 15.05.2020թ. կնքվել է դրամաշնորհի հատկացման պայմանագիր: Պայմանագրին կից հավելվածով ներկայացված

«Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ-ի 2019-2022թթ. համար Համաշխարհային բանկի «Առևտրի խթանման և որակի ենթակառուցվածքի» վարկային ծրագրի միջոցների հաշվին կատարվող գործառնական ծախսերի նախահաշվի համաձայն՝ պայմանագրի ընդհանուր գումարը կազմել է 1,783,822.9 հազ. դրամ, որից 1,415,500.0 հազ. դրամը վարկային, իսկ 368,322.9 հազ. դրամը՝ համաֆինանսավորման միջոցներն են:

Համաձայն «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հաշվետու ժամանակահատվածի ծախսերի վերաբերյալ տեղեկատվության՝ ծախսերն իրականացվել են հետևյալ ուղղություններով.

No	Կազմակերպություն	Վճարում, հազ. դրամ		
		ՀԲ վարկային միջոցներից	ՀՀ համաֆին. միջոցներից	Ընդամենը
	ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՖՈՆԴ, այդ թվում՝	54,129.14	29,027.36	83,156.50
1	Գործառնական ծախսեր	54,129.14	29,027.36	83,156.50
2	Ներկայացուցչություններ	-	-	-
3	Ինվեստիցիոն բանկինգ/Խորհրդատվական ծառայություններ	-	-	-
4	Գնումների գործընթաց	-	-	-

Արդյունքում «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ-Ն իրեն փոխանցած 149,920.37 հազ. դրամից ծախսել է 83,156.50 հազ. դրամը, կամ 55.47 %-ը:

ԾՐԱԳԻՐ՝ «1213 Տեսչական վերահսկողության պահպանում»:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ՝ «11007 Սննդամթերքի անվտանգության բնագավառում վերահսկողության իրականացման ծառայություններ»:

ՀՈԴՎԱԾ՝ «4111 Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ»:

ՀՀ 2020թ. պետական բյուջեով «11007 սննդամթերքի անվտանգության բնագավառում վերահսկողության իրականացման ծառայություններ» միջոցառման «4111 Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» հոդվածով առաջին կիսամյակի ճշտված պլանով ծախսը նախատեսվել է 402,021.7 հազ. դրամի չափով, ֆինանսավորումը կազմել է 338,000.0 հազ. դրամ, փաստը /դրամարկղային ծախսը/՝ 332,614.6 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 395,752.9 հազ. դրամ:

Նախատեսված ֆինանսական միջոցները ծախսվել են ստորև ներկայացված նպատակների համար.

հազ. դրամ

Վճարման նպատակ	հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	ընդամենը
Հաշվարկված աշխատավարձ	48,276.79	52,313.95	53,057.63	55,131.42	60,490.70	10,389.24	279,659.73
Բարձր լեռնային	161.50	165.33	174.55	159.24	115.37	33.09	809.07
Դասային աստիճան	997.77	1,062.75	1,081.28	882.22	17.42	0.00	4,041.44
հավելավճար	1,881.72	193.35	173.41	158.36	170.40	0.00	2,577.23
Արձակուրդային վճար	8,200.41	4,828.95	3,030.56	2,693.81	3,519.47	16,959.74	39,232.94
Պարգևավճար	0.00	0.00	0.00	0.00	0.00	10,504.75	10,504.75
Վերջնահաշվարկ	287.36	225.14	0.00	1,584.76	768.44	1,440.21	4,305.92
Ժամանակավոր անաշխատունակության նպաստ	161.11	377.24	389.74	319.83	70.26	239.84	1,558.01
Հղիության և ծննդաբերության նպաստ	2,680.30	2,636.19	914.53	249.62	1,820.59	214.43	8,515.65
Օգնություն	0.00	347.90	92.62	0.00	0.00	256.62	697.14
Հաշվարկված է ԸՆԴԱՄԵՆԸ	62,646.95	62,150.81	58,914.31	61,179.24	66,972.65	40,037.92	351,901.88
Եկամտային հարկ	14,408.80	14,294.69	13,550.29	14,071.23	15,403.71	9,149.70	80,878.41
Պարտադիր կուտակային վճար	729.99	711.74	712.29	757.92	811.92	406.86	4,130.72
Դրոշմանիշային վճար	225.00	258.00	259.00	265.00	275.00	137.00	1,419.00
Անդամավճար	575.01	568.63	551.04	582.71	611.35	393.27	3,282.01
Վճարված է ԸՆԴԱՄԵՆԸ	46,708.15	46,317.75	43,841.69	45,502.39	49,870.67	29,951.09	262,191. 74

Այսպիսով՝ 2020թ. 6 ամսվա համար հաշվարկված գումարը կազմել է 351,901.88 հազ. դրամ, որը գերազանցել է սահմանված ֆինանսավորումը 13,902.0 հազ դրամով, դրամարկղային ծախսը՝ 19,286.2 հազ. դրամով և պակաս է փաստացի ծախսից 43,851.0 հազ. դրամով: Տարբերությունների պատճառները պարզաբանելու նպատակով նախատեսված զննում, դիտարկումը կիրականացվի 9 ամսվա հաշվեքննության շրջանակներում:

ԾՐԱԳԻՐ՝ «1223 Միջազգային դատարաններում, միջազգային արբիտրաժներում և այլ միջազգային ատյաններում ՀՀ շահերի ներկայացում և պաշտպանություն, դրանց կողմից ընդունված վճիռների և որոշումների կատարման ապահովում»:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ՝ «11001 Հայաստանի Հանրապետության շահերի ներկայացմանն ու պաշտպանությանն ուղղված փաստաբանական, իրավաբանական ծառայություններ»:

2020թ. պետական բյուջեով «11001 Հայաստանի Հանրապետության շահերի ներկայացմանն ու պաշտպանությանն ուղղված փաստաբանական, իրավաբանական ծառայություններ» միջոցառման «4861 Այլ ծախսեր» հոդվածով առաջին կիսամյակի ճշտված պլանով ծախսը նախատեսվել է 850,552.35 հազ. դրամ, ֆինանսավորումը կազմել է 455,895.24 հազ. դրամ, փաստը /դրամարկղային ծախսը/՝ 429,655.94 հազ.դրամ, փաստացի ծախսը՝ 478,595.94 հազ.դրամ:

Նախատեսված ֆինանսական միջոցները ծախսվել են ստորև ներկայացված հետևյալ նպատակների համար.

N	Կազմակերպության անվանումը	Վճարման ամսաթիվ	Վճարման նպատակը	Հազ. դրամ	Հազ.ԱՄՆ դոլար
1	Baker & McKenzie LLP ընկերություն	1.06.2020	ՀՀ շահերի պաշտպանության համար	102,627.0	210.0
2	LALIVE ընկերություն	18.06.2020	ՀՀ շահերի պաշտպանության համար	41,392.45	85.33
3	LALIVE ընկերություն	15.04.2020	Իրավաբանական ծառայություններ ՀՀ շահերի պաշտպանության համար	285,636.49	582.46
Ընդամենը				429,655.94	877.79

Հաշվեքննության ընթացքում ի հայտ եկան որոշ հարցեր՝ կապված ոչ ռեզիդենտի շահութահարկով հարկման, կնքված համաձայնագրով սահմանված ծառայությունների ոլորտին չառնչվող ծառայությունների ձեռքբերման հետ, սակայն զննում և դիտարկում ընթացակարգերի չկիրառման (COVID-19-ով պայմանավորված անհնարինության պատճառով) և այդ պատճառով փաստերի հիմնավորման անհնարինության պարագայում դրանց վերաբերյալ եզրակացություն չի ներկայացվել:

4. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՄԲ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՅԼ ՓԱՍՏԵՐ

ՀՀ վարչապետի աշխատակազմի 2020 թվականի բյուջեով առաջին կիսամյակում պլանավորվել է իրականացնել 53 միջոցառում, սակայն 352,644.80 հազ. դրամ ընդհանուր գումարով 14 միջոցառում ընդհանրապես չի իրականացվել:

Հաշվեքննությամբ ընդգրկված թվով ութ միջոցառումների իրականացման շրջանակում բյուջետային ծախսերի կատարման ցածր ցուցանիշ է արձանագրվել «1136 ՀՀ վարչապետի լիազորությունների իրականացման ապահովում» ծրագրի «11011 Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող առևտրի և ենթակառուցվածքների զարգացման ծրագիր» միջոցառման «4521 Սուբսիդիաներ ոչ պետական ոչ ֆինանսական կազմակերպություններին» հոդվածով փաստի (դրամարկղային ծախս) գծով, որը կազմել է 29,04% և «1018 Պետական հատվածի արդիականացում» ծրագրի «32001 Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Պետական հատվածի արդիականացման երրորդ ծրագրի շրջանակներում էլեկտրոնային կառավարման համակարգերի և սարքավորումների ձեռքբերում» միջոցառման «5129 Այլ մեքենաներ և սարքավորումներ» հոդվածի փաստի գծով, որը կազմել է 60,77%:

5. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

2020 թվականի առաջին կիսամյակի բյուջեն թերակատարվել է, կամ կատարվել է 64.24%-ով: Ցածր կատարողականներ են արձանագրվել նաև իրականացվող երկու միջոցառումների մասով:

6. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Հետևել պետական բյուջեով նախատեսված ծրագրերի և իրականացվող միջոցառումների կատարման և այդ նպատակով հատկացված ֆինանսական միջոցների ծախսման ընթացքին:

Հաշվեքննության իրականացման համար ստացվել է բավարար տեղեկատվություն:

Ծանոթացման և ստորագրման նպատակով հաշվեքննության արձանագրությունը ներկայացվել է հաշվեքննության օբյեկտի ղեկավարին, որի վերաբերյալ ներկայացվել է գրավոր բացատրություն, առարկություններ չեն ներկայացվել (կցվում է):